



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կարգի (այսուհետ՝ Կարգ) 2.1, 2.2 և 3.1 կետերի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ նշանակել փաստաբան Արման Խաչատրյանին (արտոնագիր թիվ 684):
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արման Խաչատրյանին և Հանձնաժողովի համակարգող Կարեն Մեժլումյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

05 սեպտեմբերի 2014թ.
թիվ 316-Ա
ք. Երևան